«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	**Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հ.Թումանյանի ստեղծագործությունների ուսուցման միջոցով**
ԱՌԱՐԿԱ	**Հ.գրականություն**
ՀԵՂԻՆԱԿ	**Հասմիկ Գրիգորի Գևորգյան**
ՄԱՐԶ	**Շիրակ**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**Նահապետավանի միջնակարգ դպրոց**

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հ.Թումանյանի հայրենասիրական բովանդակությամբ ստեղծագործությունների ուսուցման միջոցով

Բովանդակություն

Ներածություն .....……..3

Թեմայի արդիականություն……..4

Հետազոտական աշխատանքի նպատակը խնդիրները…….5

Հայրենիք կերպարը Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում 5

Եզրակացություն ……13

Օգտագործված գրականության ցանկ ……15

Բաց դասի պլան……..16-18

Նահապետավանի միջն.դպրոցում Հ.Թումանյանի 150-ամյակին նվիրված բաց դասի նկարներ,պաստառներ ,բեմականացում……19-22

Ներածություն

Հ.Թումանյանը մեր ազգային մեծ բանաստեղծն է:«Մեր թռիչքը Հովհ.Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել»,-գրել է մեծ քնարերգու Ավ.Իսահակյանը:

‹‹Կա Մեծարենց ,կա Տերյան,և բազում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»,-գրել մեծն պոետ Ե.Չարենցը:

Ընտրեցի այս թեման,որովհետև մեր դպրոցում չորս տարի առաջ անցկացրի բաց դաս՝նվիրված Հ.Թումանյանի 150-ամյակին,բնականաբար,դեռևս չորս տարի առաջ մանրակրկիտ ուսումնասիրեցի և կատարեցի եզրահանգումներ,որն էլ կայուն հիմզ դարձավ իմ հետազոտակ աշխատանքի համար:

Ավագ դպրոցում Հ.Թումանյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը հատկացված է տասնչորս դասաժամ:

Ուսուցման նպատակներն են՝ գրողի ապրած պատմական ժամանակաշրջանի ընդհանուր բնութագրի իմացությունը և ներկայացնելու կարողությունը,հայ գրականության մեջ Թումանյանի տեղի և բերած նորության ընկալումն ու արժևորումը, նրա աշխարհայացքի, գրական սկզբունքների իմացությունն ու դրանց գեղարվեստական մարմնավորումը տեսնելու, գրական երկերի գաղափարական բովնադակությունը ընկալելու և բնորոշելու, մեկնաբանելու կարողության ու հմտության ամրակայումն ու խորացումը:Հ.Թումանյանը գրել է բանստեղծություններ,պոեմներ,նորավեպեր,զրույցներ,հեքիաթներ,ակնարկներ, Քննադատական և հրապարակախոսական հոդվածներ,բայց ամենից առաջ,իհարկե,նա բանստեղծ է;

Թումանյանը հեղաշրջող դեր է կատարել հայ բազմադարյան պոեզիայում:Նա ապրել է մի դարաշրջանում,երբ վճռվում էր ժողովուրդների և մարդկանց բախտը:

Թեմայի արդիականությունը

Թումանյանի ստեղծագործությունը, շնչելով ու ապրելով ազգային ոգով, դարձավ մեր ժողովրդի սրտից բխած խոսքը, իսկ նա՝ ամենաազգային, ամենաժողովրդական բանաստեղծը, իր ժողովրդի կենսագիրն ու ժամանակագիրը:

Թումանյանի ստեղծագործությունը կարծես հայի կյանքի հանրագիտարան լինի,որից շատ բան կարելի է սովորել և քաղել հայ ժողովրդի վարքուբարքի, կենցաղի, սովորույթների, ազգային հոգեբանության ու մտածողության մասին:

Հայրենիքի թեմայի քննությունը Թումանյանի ստեղծագործություններում արդիական նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս նոր ժամանակների չափանիշներով վերլուծելու ազգային բազմաթիվ հարցեր, ինչպես նաև ամենայն հայոց բանաստեղծի հայրենասիրական գաղափարների վերլուծությամբ նպաստել հայրենասիրական դաստիարակության ամրապնդմանը:

Թախիծով և հպարտությամբ կարող եմ փաստել,որ հայրոնասիրական դաստիարա-

կությունը գրականության ժամերին ամուր հիմքերի վրա է դրված թե՛ նահապետավանի միջնակարգ դպրոցում,թե՛ Հայաստանի Հանրապետության ցանկացած դպրոցում ,իսկ վերջնարդյունքների մասին փաստում է Քառասունչորսօրյա պատերազմում մեր սաների մասնակցությունն ու ցուցաբերած արիությունը,այո՛,հպարտ եմ ,որ հիմա էլ մեր կենդանի հերոսները իրենց կատարած սխրագործություններով վառ օրինակ դարձան ապագա սերունդների համար:

Ամենայան հայոց բանաստեղծը իր գերմարդկային ջանքերն էր ուղղում օգնելու եղեռնից մազապուրծ հայ մանուկներին և գաղթականներին և ,այո՛, դաստիարակեց մեզ՝ ապագա սերունդներիս,լինել համախմբված,լինել աջակից,լինել կարեկցող,լինել ապրումակցող , և այդ է փաստում Քառասունչորսօրյա պատերազմում դպրոցներում կազմակերպված ցանցերի հյուսման գործընթացը:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները

Ուսումնասիրության նպատակն է սովորեցնել և սերմանել հայրենասիրություն՝ «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ» ստեղծագործությունների միջոցով և սերմանել ազգային ոգի աշակերտների մեջ:

Խնդիրներն են՝ զարգացնել վերլուծական կարողություն և ուղղորդել վերլուծելու հայրենիքի կերպարը ստեղծագործութունների հիման վրա:

Հայրենիքի կերպարը Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից և ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացումները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կուսումնասիրենք՝ հայրենիքի կերպարը Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ և կփորձենք ցույց տալ, թե ինչ կտա աշակերտներին հետևյալ ուսումնասիրությունը:

Հայրենասիրական գործառույթի իրականացման առումով աշակերտները՝

- **կընդլայնեն Հայաստան աշխարհի, նրա հերոս զավակների մասին տեղեկությունների իմացությունը, կխորացնեն ճանաչողական հետաքրքրությունը հայրենի երկրի նկատմամբ,**
- **ձևավորված բարոյական արժեքները կօգտագործեն ինքնադաստիարակման նպատակով,**
- **կվերլուծեն բնագրի բովանդակությունը՝ արտահայտելով սեփական զգացմունքներն ու տպավորությունները:**
- **կմեկնաբանեն և իրենց վերաբերմունքը կարտահայտեն հայրենիքի, պատերազմի և խաղաղության վերաբերյալ(ստեղծագործական շարադրություն):**
- **կկարողանան կապեր գտնել բնագրի բովանդակության, նկարագրման և սեփական կենսափորձի միջև (նկարագրել բանաստեղծությունները) :**

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը,որը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային համակարգ ձրավորելը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում այդ ուղղությամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ

լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական հատկանիշների ճշմարտացիությունը:

Ամենայն հայոց բանաստեղծ. այս տիտղոսը հայ ազգը շնորհել էր ընտրյալ ու արժանավոր բանաստեղծին՝ հայ գրականության մեջ նրան առանձնացնելով որպես մեծություն:

Նա իր ստեղծագործությամբ գեղարվեստորեն ամփոփեց հայոց ամբողջ պատմությունը՝ այս առումով չունենալով հավասարը և իր նախորդներից, և ժամանակակիցներից:

Այս առումով էլ Թումանյանը եզակի է, անկրկնելի և անզուգական: Թումանյանը դարձավ այն մեծ, անընդգրկելի հոգևոր ավազանը, որի մեջ պետք է մկրտվեին իրենից հետո եկող գրական սերունդները:

Լինելով հայ գրականության բազմաժանր ու ժողովրդական բանաստեղծներից մեկը՝ Թումանյանը հեղաշրջող դեր կատարեց հայ բազմադարյան պոեզիայում: Նա ասպարեզ եկավ բախտորոշ մի ժամանակաշրջանում, երբ վճռվում էր ժողովրդի ճակատագիրը: Հայոց պատմության ոչ մի ուրիշ ժամանակ հույսերի այդքան մեծ վերելքներ ու վայրէջքներ, մեծ պատրանքներ ու առավել ևս մեծ անկումներ չի խտացնում, որքան Թումանյանի ապրած ժամանակաշրջանը՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները:

Թումանյանը եղավ այդ ամենի ականատեսն ու մասնակիցը: Նրա գիտակցական կյանքը շուրջ մեկ տասնամյակ անցավ հրդեհների մեջ: Բանաստեղծն այրվում էր իր ժողովրդի ճակատագրով ու ցավերով: Եվ այդ մեծ վշտից ծնվում են բանաստեղծական հետևյալ տողերը.

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերդդ լրցնեմ: (հ. II, էջ 157)

Օգտվելով ժողովրդական բանահյուսության խորքերից, նյութ քաղելով հազարամյա հոգևոր գանձերից, մաքառումներից ու հայ մարդու երազներից՝ Թումանյանն ստեղծել է մեր առասպելական հայրենիքի կերպարը, նրա գեղարվեստական պատմությունը՝ նշելով նրա անցած ու անցնելիք ճանապարհը: Նա այսպես մեկնաբանեց ազգային բանաստեղծի կոչումը. <<Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մեջ է նրա թշվառությունը, ինչպե՞ս են ապրում, ինչպե՞ս են խոսում, լալիս, ուրախանում և այլն, նրա ժողովրդին, ահա՛, այդ է հարկավոր, այդ առավելությունները, այդ հատկությունները միայն կարող են նրան ձեռնադրել հայոց բանաստեղծ…>>2:

Ստեղծագործական կյանքի առաջին շրջանում Թումանյանն իր նախորդ - ների նմանողությամբ քիչ տողեր չէր նվիրել հայրենիքին, ազգային ազատագրության գաղափարին:

Այդ նմանողական բանաստեղծություններին աստիճանաբար փոխարինում են ինքնուրույն ու ինքնատիպ շերտերով ստեղծագործությունները:

Դեռևս 1890-ական թթ. բանաստեղծի հոչակած թևավոր կոչը՝ «Դեպի ժողովուրդը, դեպի բնությունը, հայոց գրողներ», դարձավ նրա ամբողջ ճանապարհի ուղեցույցն ու նշանաբանը: Սրանից շեղվող կամ, առավել ևս, սրան հակասող որևէ տող անհնարին է գտնել Թումանյանի ժառանգության մեջ: Թումանյանն ավելի ամբողջական, ավելի համապարփակ, քան իր նախորդներից որևէ մեկը, դարձավ իր ժողովրդի կենսագիրը, վարքագիրը և ժամանակագիրը միաժամանակ:

Հայրենիքի հավաքական պատկերի մասին Թումանյանի անհանգիստ հոգու մտորումները, սկսած «Երկու սև ամպ» բանաստեղծությունից, դրանից առաջ և հետո գրած բանաստեղծություններից, պոեմներից ու բալլադներից մինչև քառյակները, հանգում են ճշմարտության որոնմանը, անձնական վշտի պատկերումից գնում դեպի մեղքեր չգործած իր ժողովրդի հալածականության պատճառների քննությունը:

Ձեզ ո՞վ հալածեց, ո՞ր դաժան քամին,
Ո՞ր չար թըշնամին –
Շընչում է մըրրիկն իմ անուշ հովտում,
Թոշնել են վաղուց ծաղկունքն իմ սիրած.

Զրմեռն է այնտեղ, ձմեռ՝ իմ սրտում,

Ծաղիկ ու ցընորք - բոլորը կորած... :

Հայրենի երկրից եկող անամոք վիշտը հանգիստ չի տալիս բանաստեղծին և ընդհանուրի ցավով մտահոգ թշվառության ու թախծի երգիչը ամենուրեք տես - նում է տխուր ավերակներ և «ցավալուր հեծության ձայներ»:

«Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Մեր ուխտը» և մի շարք այլ բանաստեղծություններում Թումանյանը տալիս է ոչ միայն հայրենիքի հալածական վիճակի, այլև ժողովրդի անցած դարավոր դժվարին ճանապարհի գեղարվեստական պատկերը, նրա պատմությունն ու այդ պատմության փիլիսոփայությունը:

Այդտեղ բանաստեղծը ներկայացնում է մի շարք խորհրդանիշներ՝ լույս, հույս, կանաչ, սուգ և այլն, որոնց միջոցով վեր է հանում ժողովրդի անդուլ ընթացքը դեպի լույս ու փրկություն:

Թումանյանի քնարերգության հերոսը հայրենիքում ժողովրդի ցավերով տառա - պող մարդն է, սովորական հայ մարդը՝ իր առօրյայով ու կենցաղով, իր հոգսերով ու կյանքով:

Բանաստեղծի հայրենասիրական քնարերգության էջերում առանձնանում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: Այս ստեղծագործությունը գրվել է 1915 թվականին: Հայացքը անհայտին հառած ու տիեզերքում թափառող, սիրտ ու միտք ունեցող բանաստեղծը միշտ իր ժողովրդի հետ է, նրա սիրտը մղկտում է ժողովրդի թառանչից աղեկեզ: Բանաստեղծը նկարագրում է սև ու սուգի հովիտ դարձած հայրենիքը, նրա գաղթական զավակներին, որոնց շարքերը ուժասպառ են, գյուղերն ու շեները՝ դատարկ: Ջարդարար ոհմակները տրորում են հայրենիքի ծաղկավառ դաշտերը, դրա համար էլ երգերը խեղճ ու լալկան են հնչում, մարդկանց հայացքները անժպիտ դառնում: Նույնիսկ այս պայմաններում հայ ժողովրդի ցավով տառապող բանաստեղծը հուսալքության խոսք չի ասում իր զարկված ու զրկված, որբի ու ողբի հայրենիքին: «Հայրենիքի հետ» բանաստեղծությունն ունի յուրօրինակ կառուցվածք: Բանաստեղծության յուրաքանչյուր տուն մեր պատմության ու գոյափիլիսոփայության մի յուրօրինակ խտացում է՝ ընդհանրացնող երկտողով:

Ամեն տուն վերջում այդ երկտողն ունի՝ երկու բառի փոփոխությամբ, որոնք ներքին հանգ կազմելով՝ ապահովում են զգացմունքների ու տրամադրությունների որոշակի ընթացք՝ հայրենիքի ողբերգության հանդեպ բանաստեղծի անափ վշտից մինչև բացառիկ լավատեսություն:

Այսպես՝ առաջին երկու տներում ողբերգականն արտահայտվում է. «Զարկվա՜ծ հայրենիք, Զրկվա՜ծ հայրենիք» տողերով, իսկ երրորդ և չորրորդ տների վերջում հնչում են «Լույսի՜ հայրենիք, Հույսի՜ հայրենիք» և «Իմ նո՜ր հայրենիք, Հրզո՜ր հայրենիք» տողերը, որոնք հայրենիքի կենսունակ ուժերի համախմբման, նրա վերածնության ու հարատևության լավատեսական արտահայտությունն են:

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մրոկրտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՜վ գյուղերից, և՜ շեներից՝ տրխո՜ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՜ծ հայրենիք,
Զրկվա՜ծ հայրենիք: (հ. I, էջ 149)

Բանաստեղծը հավատում է, որ իր ժողովուրդը չարաղետ տանջանքներում խորհում է այն մեծ խոսքը, որն ասելու է աշխարհին: Հայրենիքի կենսունակ ուժերի համախմբման, նրա վերածնության ու հարատևության լավատեսական խոսքով է ավարտվում բանաստեղծությունը.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած
Հազա՜ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին,

Ու պոետներ, որ չեն պրդծել իրենց շուրթերն անեծքով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,

Իմ նո՛ր հայրենիք,

Հրգո՛ր հայրենիք... (հ. I, էջ 150)

Պիտի ապրի Հայաստանը, պիտի գա հույսի ու լույսի հայրենիքը, հանուր կյանքի արշալույսը, ու իրենց շուրթերը դեռ անեծքով չպղծած պոետները պիտի գովեն նրա փառքը նոր երգերով, մոր խոսքով:

«Հայոց լեռներում» բանաստեղծությունը հայոց պատմության, հայի անցած կյանքի նկարագրությունն է, ուր խտացված են մեր ժողովրդի դարավոր մաքառումները:

Հայոց պատմությունը եղել է խավար գիշերների, թալանի ու կողոպուտի մի դժվարին ճանապարհ:

Ուսուցչի ուղղորդմամբ և հնարավորինս ոչ ուղղակի օգնությամբ սովորողները կստեղծեն Հովհ. Թումանյանի գրական դիմանկարը՝ խոսքային շարադրանքի կամ համակարգչային էջի տեսքով, կկատարեն հետազոտական, ստեղծագործական,նախագծային աշխատանք, ինչը կներկայացնեն ռեֆերատների, զեկուցումների, հաղորդումների տեսքով: Ինչպես նաև անպայման կկատարեն բառային ու բառարանային տարբեր աշխատանքներ՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործական հարուստ լեզվի և ոճի հարցերն ուսումնասիրելու նպատակով, այդ թվում՝ հոմանիշների, հականիշների, հնաբանությունների, դարձվածքների, հարադրությունների, օրհնանքների ու անեծքների շուրջ:

Հովհաննես Թումանյանի ողջ ստեղծագործությունը սեր է, սեր դեպի հայրենիքը՝ հայրենիքը և ժամանակը, հայրենիքը և պատմությունը, հայրենիքը և եղեռնը, հայրենիքը և գաղափարախոսությունը, հայրենիքը և նրա ապագան… Այն մնում է հաստատուն մեծություն, և ամեն ինչ հոլովվում է նրա շուրջը:

Կա հայրենիք, և կա այդ հայրենիքի պատմությունը՝ ըստ էության հայրենիքի ստվերը: Անգոհ կամ խեղճ է ոչ թե հայրենիքը, այլ այդ ստվերը, որ ավերակից ու պարտություններից զատ ոչ մի հիշատակ չի թողել հայոց քարավանի՝ <<շփոթ, սոսկահար, թալանված, ջարդված ու հատված-հատված>> ընթացքում, այդ իսկ պատճառով մնացել է<< մորմոքը նահիրյան…>>:

Հովհ. Թումանյանի ծննդավայրը՝ Լոռին, բանաստեղծական երկիր է և բանաստեղծների երկիր, և հայոց բանաստեղծության մեծ հանճարը պատմական Հայաստանի գավառներից այս անգամ էլ Լոռու Դսեղ գյուղի քահանա Տեր-Թադևոսի անդրանիկ որդուն ընտրեց: Յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային մեծությունը, հանճարը, որն աղոթք է դառնում այդ ժողովրդի շուրթերին ու մահանում նրա հետ: Այդպիսին է Պուշկինը ռուսների, Թումանյանը՝ հայերի համար, որովհետև դարձավ հայ ժողովրդի <<ազնիվ>> կենսագիրն ու իրավամբ օծվեց Ամենայն հայոց բանաստեղծ:

Թումանյանը ծնվել էր մի ընտանիքում, որի նախահայրերը եղել են գյուղի տերեր, կռիվների մեջ կոփված կտրիճ մարդիկ, Լոռվա ձորերի քաջ որսորդներ ու ասպետներ: Թումանյանի նախապապերը, սերելով հայոց պատմության էջերում իրենց բազում սխրագործություններով հռչակված Լոռու Մամիկոնյաններից, եղել են քաջ, խիզախ մարդիկ, պատմության մեջ հայտնի են եղել շինարարական գործերով: Այդ տոհմի արժանավոր զավակն է եղել Հովհաննես Թումանյանը:

<<Գրողին ճանաչելու համար պետք է լինել նրա ծննդավայրում>>, - գրել է Գյոթեն:

Հեքիաթի է նման Թումանյանի ծննդավայրը՝ Լոռին: Գանգրահեր անտառները, խոր ձորերը, միգապատ լեռներն ու քարափները ստեղծում են կախարդական պատկեր, և թվում է, թե այրերը լեցուն են դևերով ու չարքերով, գետերը՝ ջրահարսերով:

Ու մի դյութիչ մեղեդի թևածում է այս աշխարհի վրա:

Պատմական հարուստ անցյալ ունեցող Լոռին մի գեղեցիկ ու անառիկ լեռնագավառ է, որը հնում ապահով ամրոցի դեր է կատարել շրջանի բնակիչների համար: Լոռու հիասքանչ բնությունն էլ կատարում է հանճարի մկրտությունը:

Մի առիթով Ավ. Իսահակյանը ասել է. <<Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր: Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվում էր կյանքով… Օհաննեսն իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին…>>2:

Գեղատես ու կուսական Լոռին իր մարդկանցով, բնությամբ, բարքերով առանցքային դեր է խաղացել բանաստեղծի ստեղծագործական կյանքում, դարձել հայրենիքի ու հայրենասիրության խորհուրդն ու խորհրդանշանը

Եզրակացություն

Մատաղ սերնդին ազգային արժեհամակարգով զինելու գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ.

- աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության հիմնահարցը հրատապ է մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում:
- Ներկայումս, մեր հասարակության կյանքի բոլոր ոլորտներում արմատական վերափոխումների հետ կապված, հիմնահարցը հատուկ նշանակություն է ձեռք բերում: Քաղաքականության, տնտեսության, կրթության մեջ տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են «հայրենասիրություն» հասկացության էության և բովանդակության հատուկ վերլուծություն:
- հայրենասիրության բազմակողմանի վերլուծությունը հիմք է տալիս առանձնացնեու նրա կառուցվածքում մի քանի բաղադրիչ տարրեր՝ մտավոր, հուզակամային և գործնական:
- Ազգապահպանության միջնաբերդը բոլոր ժամանակներում եղել և մնում է ազ-գային դպրոցը;Դպրոցում ստացած գիտելիքներով ,հայրենասիրական դաս-տրարակությամբ

Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս հայրենասիրական դաստիարակությունը դիտել որպես մանկավարժների և սաների փոխգործակցության գործընթաց, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը, հայրենասիրական համոզմունքների և սաների հայրենասիրական կայուն վարքագծի ձևավորմանը:

Այսպիսով, հայոց ազգային գիտակցության հիմքը հայրենիքի գաղափարն է, որ հետևողական հաջորդականությամբ արծարծվել է մեր պատմության բոլոր փուլերում:
Դա ,ըստ ամենայնի ,պայմանավորված է հայ ժողովրդի պատմական ճակատագրով, որը միշտ խնդիր է ունեցել պաշտպանելու հայրենիքը, պահպանելու ժողովրդին, նրա լեզուն և մշակույթը:

Թումանյանի ստեղծագործությունը մարմնավորեց մարդասիրականը, ճշմարտացին, համամարդկայինը և գեղեցիկը: Նա յուրովի կերտեց հայրենիքի ու ժողովրդի կերպարը:
Ողջ հայ գրականության պատմության մեջ թերևս հաշված գրողներ կան, որ այս կամ այն կերպ չեն անդրադարձել հայրենիքին կամ հայրենասիրության գաղափարին: Եվ գրողներ էլ կան, ում ստեղծագործությունն արյուն ու ավիշ է ստանում հայրենիքից և նրա պատմությունից, Հովհ. Թումանյանը վերջիններիս հետ է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան 1969

2. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան 1988

3. Մ. Մկրյան., Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը, <<Սովետական գրող>>, Երևան 1981 Лепелетье Л.И., План национального воспитания // Педагогические идеи великой французской революции. Пер. с фр., М.: Работник просвещения 1926

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆԸ՝ 8-րդ

ԴԱՍԻԹԵՄԱՆ՝Հովհաննես Թումանյանի «Փարվանա»բալլադը

ԴԱՍԻՏԻՊԸ՝ԱՄՓՈՓՄԱՆ ԴԱՍ

ԴԱՍԻՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝45 ՐՈՊԵ

ԴԱՍԻՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա/ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝

- ✓ Ամրապնդել գիտելիքները «Փարվանա» բալլադի մասին
- ✓ Ծանոթանալ «Հայֆիլմ» կինոստուդիայի «Փարվանա» բալլադի էկրանավորմանը
- ✓ Տարբերել բալլադը պոեմից

Բ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

- ✓ Լսելու
- ✓ Նմանություններն և տարբերությունները տեսնելու
- ✓ Ընկալածը վերարտադրելու
- ✓ Տրամաբանելու
- ✓ Զույգերով աշխատելու

ԱՆՀՐԱԺԵՇՏՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,ուղղորդված հարցերով թերթիկ, տեղեկատվություն «Հայֆիլմ» կինոստուդիայի մասին , A4 ձևաչափիթղթեր,պրոյեկտոր,համացանց,համակարգիչ:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆՆՅՈՒԹԵՐ՝ «Փարվանա» մուլտֆիլմը

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻՁԵՎԵՐԵՎԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿհամակարգ,մտագրոհ, դիտում, հեղինակի աթոռ, կարճ դասախոսություն, մտքերի տարափ,Վենի դիագրամ, զույգերով աշխատանք:

ՀԻՄՆԱԿԱՆՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ էկրանավորում,պոեմ,բալլադ, զգացմունք:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆՄԱՍ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մտագրոհի միջոցով ուսուցիչը վեր է հանում աշակերտների գիտելիքները «Փարվանա» բալլադի մասին,ապա կիրառում է «հեղինակի աթոռ» մեթոդը:Ուղղորդված հարցեր են հնչում հեղինակի աթոռին նստած աշակերտին և նրա կողմից՝ մյուսներին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարճ դասախոսությամբ ուսուցիչը ներկայացնում է «Հայֆիլմ» կինոստուդիայի ստեղծման պատմությունը:Ապա միասին դիտում են «Փարվանա» մուլտֆիլմը:Տեսանյութը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝

https://www.youtube.com/watch?v=N3NjbYBlCfI&t=515s

Այնուհետև մտքերի տարափի միջոցով տալիս են բալլադի և պոեմի նկարագրերը:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆՓՈՒԼԻՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Կազմում են Վենի դիագրամ՝ «բալլադ» և «պոեմ» եզրույթներով:



Աշխատում են զույգերով,ներկայացնում են աշխատանքները և գնահատվում:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնել սեփական կարծիքը բալլադում կատարվող անցքերի շուրջ:

Տաձև աղյուսակի միջոցով դուրս գրել «Փարվանա» բալլադում օգտագործված համեմատություններն ու մակդիրները:

Բաց դաս- միջոցառում՝ նվիրված Հ.Թումանյանի 150 –ամյակին,դասրանը կահավորել էինք մեր աշակերտների կողմից պատրաստված դիմանկարով,պատի թերթերով:

Բեմականացում « Փարվանա » բալլադ,5-րդ դասարան:

Դիմանկար,ստեղծագործել է մեր դպրոցի աշակերտ Տարոն Խաչատրյանը;

Օգտագործվել է թել և մեխ;